Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի , ֆիզիկայի /8 ժամ/, մաթեմատիկայի /5 ժամ/, բնագիտության /4 ժամ/, բնության /4 ժամ/, կենսաբանության /8 ժամ/, աշխարհագրություն /18 ժամ/ , պատմության /11 ժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- "Հանրակրթության մասին "ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ հունվարի 4-ից մինչև հունվարի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 22-ին, ժամը 10:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում.հասցեն՝ ք. Կապան Մ. Հարությունյան փ. 5-Ա

Տեղեկությունների համար զանգահարել 077782955 կամ 028553783: